

ՀՐԱՎԵՐ

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

Նախագծում և հեղինակային հսկողություն. /ՀՀ Տավուշի, Լոռու, Վայոց Ձորի, Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի 2016թ. ջրամատակարարում/ և ՀՀ Սյունիքի մարզի 2016թ. ոռոգում/ IRFSP/TA/QCBS-2016/015

Հայաստանի Հանրապետություն

"Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն" Ծրագիր  
Խորհրդատվական Ծառայություններ՝ Որակի և Գնի վրա հիմնված ընտրություն  
ՄԶՕՀ Փոխառություն No -1673 P

Հայաստանի Հանրապետությունը /այսուհետ՝ Փոխառու/ փոխառություն է ստացել Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամից /այսուհետ՝ ՄԶՕՀ/ "Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն" Ծրագիրը /այսուհետ՝ ԵԳՖԱՕ / իրականացնելու համար և նպատակ ունի գումարների մի մասն օգտագործել սույն խորհրդատվական ծառայությունները ձեռք բերելու համար:

ՀՀ ԿԱ "Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ" ՊՀ-ն /այսուհետ՝ ԾԻԳ/ Տավուշի, Լոռու, Արագածոտնի, Վայոց Ձորի, Սյունիքի, Գեղարքունիքի և Շիրակի մարզերի համայնքային ջրամատակարարման նախագծային աշխատանքների իրականացման համար Խորհրդատուների ընտրության առաջիկա մրցույթին մասնակցելու նպատակով բոլոր շահագրգիռ կազմակերպություններին հրավիրում է ներկայացնել Հետաքրքրության հայտեր ներքոհիշյալ բոլոր ծրագրերի համար՝

"ՀՀ Տավուշի մարզի Ոսկեվան, Արծվաբերդ, Կոթի, Այգեձոր, Չինչին, Հաղարծին, Նորաշեն համայնքների ջրամատակարարում", "ՀՀ Լոռու մարզի Սվերդլով համայնքի ջրամատակարարում", "ՀՀ Վայոց Ձորի մարզի Ազատեկ համայնքի ջրամատակարարում", "ՀՀ Շիրակի մարզի Զիրհանքով, Սառնաղբյուր, Գուսանագյուղ, Լուսաղբյուր, Մարակապ, Ջաջուռ, Բասեն, Ջրառատ համայնքների ջրամատակարարում", " ՀՀ Արագածոտն մարզի Աղձք, Արագած, Վարդենուտ, Բազմաղբյուր, Ղազարավան համայնքների ջրամատակարարում", "ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդաձոր, Արտանիշ, Մեծ Մասրիկ, Վերին Գետաշեն, Ջուլաքար համայնքների ջրամատակարարում", "ՀՀ Սյունիքի մարզի Տաթև, Շենաթաղ, Լոր, Գորայք համայնքների ջրամատակարարում", "ՀՀ Սյունիքի մարզի Ագարակ, Ալվանք, Կարճևան, Լեհվազ, Մեղրի, Շվանիձոր համայնքների ոռոգում":

**Աշխատանքների նպատակը՝**

Խորհրդատուն պետք է իրականացնի բոլոր վերոհիշյալ ծրագրերի համար նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և շինարարության ընթացքում հեղինակային հսկողության մասնագիտական խորհրդատվական ծառայություններ :

Հայտում պետք է ներառվեն հետևյալ փաստաթղթերը.

- Դիմում ԾԻԳ-ի տնօրենի անունով;
- Պետական գրանցման վկայականի պատճենը;
- Հետաքրքրության հայտը ստորագրողի լիազորագիրը;
- Վերջին 5 տարիների ընթացքում ջրամատակարարման և ոռոգման ոլորտներում իրականացված նախագծային աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, ներառյալ կառույցների և պատվիրատուների անվանումները, պայմանագրային արժեքները, իրականացման տարեթիվը և այլն ;
- Նախագծային աշխատանքների կատարման համար գործիքների, սարքերի, տրանսպորտային միջոցների, համակարգչային ու գրասենյակային տեխնիկաների ցանկը;
- Հետաքրքրության հայտը համատեղ ձեռնարկատիրական գործունեության սկզբունքով ներկայացնելու դեպքում պայմանագրի պատճենը;
- Աշխատակազմի ցանկը և աշխատանքային փորձառության վերաբերյալ տեղեկատվությունը (CV),
- Նախագծային աշխատանքների իրականացման համապատասխան արտոնագրի /լիցենզիայի/ պատճենը;
- այլ տեղեկատվություն, որն անհրաժեշտ կհամարի հայտատուն:

**Կարճ ցանկի կազման նպատակով կազմակերպությունների գնահատման չափորոշիչներն են՝**

- Վերջին հինգ տարիների ընթացքում գյուղական բնակավայրերում ջրամատակարարման ծրագրերի նախագծային աշխատանքների իրականացման փորձառություն;

- Վերջին հինգ տարիների ընթացքում ոռոգման ծրագրերի նախագծային աշխատանքների իրականացման փորձառություն;

Հետաքրքրության հայտը ներկայացվում է անգլերեն, 1 բնօրինակ և 1 պատճեն:

Աշխատանքների իրականացման ենթադրվող ժամկետը՝ մոտ 3 ամիս:

Խորհրդատուն ընտրվելու է ՄԶՕՀ-ի կողմից 1982թ. նոյեմբերին հրապարակված Գնումների ուղեցույցով սահմանված ընթացակարգերի համաձայն: Ավելի մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ ստորև նշված հասցեով ժամը 09.00-18.00:

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացնել նշված հասցեով մինչև 2016թ. հունվարի 15-ը, ժ. 18.00:

***ՀՀ ԿԱ “Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի  
իրականացման գրասենյակ” ՊՀ***

***Տնօրեն՝ Աշոտ Վարդանյան***

***Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, 6 հարկ;***

***Հեռախոս՝ 374 10 – 54 – 65 -10; Ֆաքս՝ 374 10 – 58 – 80 -58; e-mail: [procurement@raed.am](mailto:procurement@raed.am)***